



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանեկան հոգեբանությունը՝ որպես
հոգեբանության առանձին ճյուղ

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Հ. Կոստյան

Ուսումնական հաստատություն՝ «Աբովյանի Ն. Վանյանի անվան N5

հիմն.դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության առանձին ճյուղ
3. Հայ ընտանիքի կերպարը նախկինում և հիմա
4. Ընտանեկան կոնֆլիկտներ
5. Ընտանեկան կոնֆլիկտների պատճառները
5. Երեխայի վարքագիծը ընտանեկան անբարենպաստ մթնոլորտում
6. Կոնֆլիկտների տեսակներն ու դրանց հիմնական պատճառները
7. Եզրակացություն
8. Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը մարդկային կուլտուրայի հիմքն է: Մենք ձևավորում ենք այն ընդերքում՝ մեր հնարավորություններով, զգացմունքներով, ցանկություններով, բայց մեզնից յուրաքանչյուրը ամբողջ կյանքի ընթացքում մնում է , այսպես ասած <<հայրական տան պատկերի կրողը>>:

Ընտանիքում երեխան սովորում է սիրել, հավատալ, ձևավորվում են բնավորության հիմնական գծերը: Նշանակում է՝ ընտանիքը մարդկային ճակատագրի փորձասենյակ է, միայն մի տարբերությամբ, որ փորձասենյակում գիտեն ինչից ինչ են ստանում, իսկ ընտանիքում պարզապես ծնվում է երեխան ու մեծանում է ընտանեկան ավանդույթներին ու պահանջներին համապատասխան:

Իսկական ընտանիքը ծնվում է սիրուց և մարդուն տալիս է երջանկություն: Ծնողները երեխաներին սիրել կսովորեցնեն միայն այն դեպքում, եթե իրենք են սիրում միմյանց: Միրով և երջանկությամբ ողողված ընտանիքը, առողջ հոգու , հավասարակշռված բնավորության, ստեղծագործելու կարողության բացահայտման դպրոց է :

Ընտանիքի ուժն այն է , որ այնտեղ մարդն իրեն զգա անփոխարինելի , ընտանիքից դուրս՝ լինի այնպիսին , որ աշխարհի հավասարակշռության նժարը չխախտվի իր ծանրությունից: Ընտանիքում համերաշխության մթնոլորտը հատկապես կարևոր է զավակների մեջ սիրելու կարողություն սերմանելու համար:

Հետազոտության նպատակները, խնդիրները՝

- առանձնացնել ընտանիքի հոգեբանության հիմնական դրույթները
- տարբերակել հայկական ընտանիքիների պատկերը նախկինում և հիմա,
- առանձնացնել այն գործոնները, որոնք ընկած են ընտանեկան նկոնֆլիկտների հիմքում,
- բացահայտել ընտանեկան կոնֆլիկտների ազդեցությունը երեխաների հուզական, իմացական և վարքային ոլորտների վրա,
- առանցնացել խորհուրդներ ընտանեկան կոնֆլիկտները կառուցողական լուծելու, հաղթահարելու համար:

-

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂ

Ընտանեկան երջանկության բանալին

բարությունն է,

անկեղծությունը, արձագանքելը:

ԷՄԻԼ ԶՈԼԱ

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից:

Ճիշտ և ճակատագրական ամուսնությունը ոչ թե երջանկության ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է հասկանա, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում, ինչ դժվարություններ կարող են ի հայտ գալ և, որ բոլոր դեպքերում ամուսինները պետք է աջակից լինեն իրար և հաղթահարեն դժվարությունները: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին կամ սպասումներին: Զուգընկերների դերերը և կնոջից, և ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը, ինչպես նաև պատասխանատվությունը մեկը մյուսի հանդեպ: Ես ընտանիքը նմանեցնում եմ գործարանի, ինչ-որ առումներով նման են, քանի որ ինչպես գործարանում ինչ-որ սարք աշխատում է ենթադրենք շշի պիտակավորման համար, մյուր՝ հյուրի ինչ-որ համ է ստանում, մյուսն էլ՝ ամբողջական հյուրին է ստանում: Ընտանիքում ամեն անդամ իր պարտականություններն է կատարում ինչպես գործարանում, մայրը զբաղվում է տնային մաքրությամբ, մանուկների դաստիարակությամբ, ինչու ոչ նաև իր աշխատանքով, հայրը՝ աշխատանք է կատարում որպեսզի մանուկները կարողանան առողջ սնվել, ունենալ բնակարան կամ այլ հարմարավետություններ, կրթություն ստանալ: Երեխաներն էլ իրենց հերթին որոշակի տարիքային ժամանակներում պետք է օգնեն ծնողներին իրենց կարողության սահմանումներում, կրթությանը մեծ ուշադրություն դարձնեն, աշխատասեր լինելով հասնեն հաջողությունների, որպեսզի արդեն մեծ ժամանակ կարողանան ապահովել իրենց ծնողների բարեկեցիկ կյանքը ի պատասխան նրանց հոգատարության և սիրո, և իհարկե կարողանան հենց իրենց ապագա ընտանիքը կառուցել ինչպես իրենց ծնողները: Այս ամենը առողջ ընտանիքում պետք է տեղի ունենա միմյանց նկատմամբ հոգատարության ու սիրո ներքո, քույրերը եղբայրները պետք է ամեն հարցում աջակից լինեն մեկը մյուսին, փորձեն հասկանալ միմյանց, անգամ նրանց տարբեր լինելու դեպքում, իսկ այդ բոլոր լավ հատկանիշները նրանք բնականաբար ձեռք են բերում ծնողներից, հետևաբար ծնողների դաստիարակությունը, երեխաների հետ շփման

տարբերակները, նրանց վերաբերմունքը միմյանց հանդեպ ամենակարևորն են ընտանիքի ճիշտ զարգացման որոշակի փուլում:

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏԿԵՐԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ և ՀԻՄՍ

Զորավոր է այն ազգը,
որն ունի զորավոր ընտանիքներ:
ՄՈՒՐԱՑԱՆ

Հասարակությունը շատ ավելի արդյունավետ է գործում, երբ դրա հիմնական միջուկը ընտանիքն է: Հայկական ընտանիքն անշուշտ ունի և նմանություններ, և տարբերություններ այլ ազգերի ընտանիքների հետ, սակայն ունի յուրահատուկ ոգի ու հոգեկերտվածք: Հոգեբան Կարինե Նալչաջյանը Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ «Արմենպրես»-ի հետ զրույցում նման կարծիք է հայտնել: Նրա համոզմամբ՝ հայ մարդու համար ընտանիքն ավելին, քան առաջնային է, և պատմականորեն երևում է, որ այն եղել է ազգապահպան օղակ:

«Մեր ընտանիքներում կապվածությունը ծնողի ու երեխայի միջև երբեմն այնքան ուժեղ է լինում, որ հեզոբանական տեսակետից բացասաբար կարող է ազդել: Ի տարբերություն եվրոպական ընտանիքների՝ հայ երեխան ավելի ուշ է հեռանում ծնողից, թուլացնում կապվածությունը», - նշեց Նալչաջյանը՝ ընդգծելով, որ ինչպես խնամքի պակասը, այնպես էլ ավելցուկն է վնասակար. ծնողական դերը ճիշտ կատարելը որոշակի իմաստություն է պահանջում: Նալչաջյանի կարծիքով՝ ընտանեկան մոդելի փոփոխությունները ներկայիս և 40 տարի առաջվա ընտանիքի մոդելների մեջ անշուշտ եղել են, բայց միևնույն է՝ շատ չեն: Դրական փոփոխությունների շարքում նա նշեց, որ ծնողները հիմա ավելի հեշտությամբ են ընդունում նորապսակների՝ առանձին ապրելու որոշումը:

Նորաստեղծ ընտանիքներն ավելի նախաձեռնող ու ակտիվ են, քան ավագ սերունդը, դա պայմանավորված է նաև ժամանակներով: Նաև սերտացել է շփումն ու փոխազդեցությունը արտաքին աշխարհի, այլ ազգերի ու մշակույթների միջև: Նորաստեղծ հայ ընտանիքի համար ամենալուրջ խնդիրներից հոգեբանը հիշատակեց «դիստանտ» (հեռվացած) ընտանիքների խնդիրը, երբ, օրինակ, հայրը մեկնում է արտագնա աշխատանքի: Այդ հեռավորությունը բացասական է ազդում ինչպես ամուսինների, այնպես էլ երեխայի ու նրա հոգեկան զարգացման վրա, նույնիսկ եթե կա էմոցիոնալ կապվածություն ու որոշակի շփում: Երեխայի մոտ դա կարող է արտահայտվել թե բարդությունների ի հայտ գալով, թե հակառակ սեռի հետ շփման խնդիրներով ու ընտանիք ստեղծելու դժվարությամբ:

«Երեխային միայնակ մեծացնող մայրերը, իհարկե, հերոսական կերպարներ են, սակայն հոր ֆունկցիան անփոխարինելի է, նրա բացակայությունը ոչ ոք լիարժեք չի կարող լրացնել», մեկնաբանեց Նալչաջյանը: Ծնողների հարաբերությունները երեխայի համար օրինակներ են. եթե մոդելներն աչքի առաջ խաթարված են, կամ առավել ևս՝ չկան, մարդն իր անձնական կյանքը ստեղծելիս կարող է շատ լուրջ դժվարությունների առաջ կանգնել: Խոսելով ընտանեկան խնդիրների լուծման մասին՝ հոգեբանն ասաց, որ այսօր Հայաստանի քաղաքացու համար բարդ է հաղթահարել ներքին դժվարություններն ու հոգեբանին դիմելը:

«Ոչ միայն Հայաստանում, այլև ողջ աշխարհում մարդկանց ավելի հեշտ է խոսել ֆիզիկական հիվանդությունների ու դժվարությունների մասին, քան հոգեբանական: Դրանք ավելի խոր անձնական են», մեկնաբանեց նա: Բացի այդ՝ որոշ մարդկանց մոտ պատկերացումները հոգեբանների ու հոգեբույժների վերաբերյալ սխալ են, նույնացված կամ ոչ լիարժեք: Հոգեբանը հավելեց, որ մեծացել է նաև հանդուրժողականությունը ամուսնալուծությունների նկատմամբ: «Հասարակությունն արդեն ըմբռնումով է մոտենում ամուսնական հարաբերությունների խզմանն ու նոր ընտանիք ստեղծելու որոշմանը: Սակայն հարկ է նշել, որ բաժանությունները հաճախ լինում են ամուսնության առաջին 24 տարիներին, մինչդեռ այդ շրջանը հաճախ ուղղակի պետք է հաղթահարել», վերջում նշեց Նալչաջյանը:

ՀՀ Արդարադատության նախարարության իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոնի տնօրեն, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի սոցիոլոգ Գայանե Հովակիմյանը «Արմենպրես»-ի հետ զրույցում ասաց, որ հայ ընտանիքը առանձնահատուկ և դոմինանտ ինստիտուտ է հասարակության արժեքամակարգում: Սակայն շատ դեպքերում արժեքը կորցնում է իր բովանդակությունը և պահպանվում է միայն ձևը: Դրա վառ օրինակն են որոշ ծիսակատարություններ, օրինակ՝ «կարմիր խնձորը»: Հովակիմյանը պնդում է՝ ընտանիքի ֆունկցիոնալությունը պահպանելու համար նման անբովանդակ ձևերից հարկավոր է ազատվել: Նա հաստատեց այն կարծիքը, որ Հայաստանում հայրիշխանությունն ակնհայտ երևույթ է: «Հասկանալու համար՝ արդյո՞ք նոր սերնդի ընտանիքներում կնոջ ու տղամարդու դերերը սկսել են հավասարվել, հարկավոր է նախ հասկանալ, որ գենդերային հավասարությունը ենթադրում է իրահավասարություն, այլ ոչ թե ֆիզիկական հավասարություն: Այդ առումով, որ Հայաստանը, աշխարհագրական դիրքով պայմանավորված, իր մեջ կրում է և Արևելյան, և Արևմտյան մշակույթներ», հարկ համարեց նշել սոցիոլոգը:

Օրինակ, կրթության նկատմամբ վերաբերմունքով մենք ավելի եվրոպական ենք, սակայն կենցաղն ավելի մոտ էլ արևելյանին: Նրա համոզմամբ՝ հարկավոր չէ խուսափել այս կամ այն ազգից ինչոր սովորույթներ փոխառելուց. ցանկացած ինստիտուտ, հատկապես՝ ընտանիքը, պետք է լինի բաց: Կարելի է զուգահեռաբար պահպանել լավ ավանդույթները, որոնք, նախ և առաջ, սերը, հարգանքն ու փոխադարձ օգնությունն են: Ըստ Հովակիմյանի՝ ժամանակն է նաև հասկանալ, որ ընտանիքը պայմանավորված չի մարդկանց քանակով. միայն մայրն ու երեխան ևս ընտանիք են: Այդ առումով՝ քաղաքային համայնքներում «միջուկային» ընտանիքի մոդելն ավելի լայն տարածում է գտնում, քան գյուղականում: Ընտանիքը հիմա ամբողջ աշխարհում ճգնաժամի մեջ է իր կայունության, դերի ու առաջնայնության իմաստով, բայց հայ ընտանիքները ունեն աջակցության ու հզորացման կարիք:

«Պետական հովանավորության մակարդակով նման քայլեր ու աջակցության կարծես չեն ձեռնարկվում, մինչդեռ դա պիտի լինի մեր առաջնային նպատակներից մեկը, որովհետև ուժեղ մարդիկ մեծանում են ուժեղ ընտանիքներում», - ավելացրեց Հովակիմյանը: Այդ առումով՝ հարկավոր է, որ ինստիտուցիոնալ օգնությունը, ասենք՝ հոգեբաններն ու սոցիալական աշխատողները, ապահովի որակ և մատչելիություն: Սոցիոլոգի խոսքով՝ հիմա սեռային դիսբալանսը լայն տարածում ունի գյուղերում: Արդեն հաջորդ սերնդի մեջ ակնհայտ երևալու են այն երեխաները, ում կյանքում հայրը բացակայել է. առաջին հերթին կձևավորվի սխալ պատկերացում ընտանիքի մոդելի մասին, մյուս կողմից՝ միգրանտ հոր

Երեխան ևս հակված է դառնալու միգրանտ: Հովակիմյանը համամիտ էր նաև այն մտքի հետ, որ սերունդներ շարունակ դաստիարակվում են կարծրացած մտածելակերպով ու հնազանդ քաղաքացիներ, և նույն դաստիարակությունը փոխանցում հաջորդներին:

«Ամեն մեկին չի հաջողվում դուրս գալ այդ շղթայից, քանի որ դերային մոդելն ընտանիքում փոխանցվում է՝ անկախ ժամանակներից: Մեզ մոտ երեխաներն ավելի շատ ձգտում են իրականացնել իրենց ծնողների սպասելիքները, քան սեփականը. արդյունքում մենք վերարտադրում ենք դարերի հնություն ունեցող սպասումներ ու գրեթե չենք ձևավորում նորը», - նշեց նա:

Մասնագետը կարծում է, որ նշված բոլոր խնդիրների լուծման համար պետք է լինի երկու կարևոր նախադրյալ. կրթության ոլորտի բեկումնային փոփոխություն և փոփոխություններ ընդունելու պատրաստակամություն: ՄԱԿի գլխավոր ասամբլեան 1993թ.ին կազմակերպության անդամ երկրներին կոչ է արել ամեն տարի մայիսի 15-ը որպես Ընտանիքի միջազգային օր տոնել: 2011թ. փետրվարի 9-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքը, որով, որպես Ընտանիքի օր ամրագրվեց մայիսի 15-ը: Օրենքի ընդունման անհրաժեշտությունը գործադիրը պայմանավորել է նրանով, որ ընտանիքը, լինելով հասարակության շարժիչ ուժը, Հայաստանի Հանրապետությունում պետք է գտնվի պետության հովանավորության և պաշտպանության ներքո:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐ



© ՀՀ մարդու իրավունքների պաշտպան

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԵՐ

Ընտանեկան կյանքում պետք է հաշվի առնել միմյանց մտքերը,
համոզմունքները, զգացմունքները,
սիրելի մարդու ձգտումները:
Պահպանելով սեփական արժանապատվությունը՝
պետք է կարողանալ զիջել միմյանց:
ՎԱՍԻԼԻ ՍՈՒԽՈՍԼԻՆՍԿԻ

Երեխայի սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝ սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեփական վերաբերմունքը մշակելու, անհատական առանձնահատկություններն իրագործելու միջոցով: Հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վախերի, տագնապների դրսևորմանը: Ընտանիքի կառուցվածքը, քանակական կազմը, ծնողական դաստիարակության ոճը, ներընտանեկան հարաբերությունները ձևավորում են աշխարհի հանդեպ վստահության կամ անվստահության առաջնային հիմնային մակարդակ, ինչը կարևոր դեր և նշանակություն ունի վախերի դրսևորման և կանխարգելման գործընթացում:

Ընտանիքի սոցիալ-հոգեբանական համակարգի և կրտսեր դպրոցականի վախերի հինախնդրին անդրադարձել են մի շարք փիլիսոփաներ, հոգեբաններ, հոգեթերապևտներ, որոնց ներդրումն արժևորելով, ներկայացրել ենք մեր մոտեցումը՝ կարևորելով դպրոցական վախերի դրսևորման վրա հատկապես ծնողական վերաբերմունքի ազդեցությունը, ինչը դիտարկվում է որպես երեխայի հետ հաղորդակցվելու ընթացքում կիրառվող վարքաձևերի, նրա անհատականությունը, բնավորությունն ու արարքներն ընկալելու և հասկանալու առանձնահատկությունների համակարգ: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները:

Ընտանիք ստեղծելու համար

բավական է սիրել:

Իսկ պատպանման համար

պետք է սովորել

համբերել ու ներել:

ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱ

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»: Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյուկի՝ Ա.Մ.Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. „Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ 9 միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների պատճառները հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն են: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն: Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր

հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է: Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա, հարցաթերթային հարցման միջոցով, որին մասնակցել է ընդլայնված և բջջային ընտանիքների 40 ամուսնական զույգ, բացահայտվել է կոնֆլիկտների առաջացման հաճախականությունը: 10 Հարցաթերթային հարցման արդյունքում ստացված հետևյալ պատկերը. Դիագրամ 1 Կոնֆլիկտների առաջացման հաճախականությունն ընդլայնված և բջջային ընտանիքներում Փաստորեն ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում: Ընդլայնված է այն ընտանիքը, որտեղ բացի ամուսիններից և նրանց երեխաներից կան նաև այլ ազգականներ:

ԵՐԵՒԱՅԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԱՆԲԱՐԵՆՊՍԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ

Ընտանիքում չի պատահում, որ ամուսինները չազդեն միմյանց վրա:

Այնտեղ, որտեղ կա սեր, դա հեշտությամբ է տեղի ունենում,

և այնտեղ, որտեղ չկա սեր, բռնության գործադրումով է

տեղի ունենում, որը և անվանում ենք դժբախտություն:

ՌԱԲԻՆԴԻԱՆԱԹ ԹԱԳՈՐ

Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝ ուղղված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տազնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրն ուրիշների մոտ ձևացնում են՝ երջանիկ են և հաշտ, իսկ տանը լիովին հակառակ պատկերն է լինում:

Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում է ծնողների՝ իր հանդեպ սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորում է կասկածամիտ վերաբերմունք: Մա խաթարում է հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորումը, կարող է առաջ բերել շեղվող վարքագիծ: Իհարկե, հարաբերություններն առանց կոնֆլիկտի հնարավոր չեն:

Խնդիրը կոնֆիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Դա կարող է լինել մեկ նախադասություն, օրինակ՝ «ինձ դուր չի գալիս այս իրավիճակը» կամ «ես վատ եմ զգում, երբ ձեզ տեսնում եմ այսպիսին»: Մա կարող է տանել լիցքաթափման, իրադրությանը գիտակցաբար մոտենալուն:

Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային սթրեսից խուսափելու համար մնում է պարզապես հեռու կանգնել իրադրությունից: Իհարկե, այս դեպքում էլ անտարբերություն է առաջանում: Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է:

ԿՈՆՖԼԻԿՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ընտանեկան կյանքում ամենակարևոր պտուտակը սերն է:

ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ

Ստորև ներկայացված են ուսումնասիրության արդյունքում բացահայտված ընտանեկան կոնֆլիկտների տեսակներն ու դրանց հիմնական պատճառները: 1. Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև: Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի ծանր բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: 12 Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում: Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը: Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում: Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն:

Դրանք են.

- ներքոտիկ ընտանիքներ, որտեղ գույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն, ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում: Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական գույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է 14 հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեւտմատիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը:

Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի 15 ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային

փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում Ֆհայրեր և որդիներ! խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել Ֆիդեալական ծնողի! իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա իդեալական և իրական ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի:

Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուներին և շներին: Գերադասում է խաղալ ագրեսիվ խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը: 3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի

ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը:

Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում նորմալ է տղա-աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ: 17 Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ: Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ պետք է եզրակացնել, որ ընտանիքի անատողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010, 456 էջ:
2. В.Х. Мирзоян : Виды семейных конфликтов и их воздействие на формирование.
3. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003. - 544с. 4. Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.
5. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990.
6. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. 240с.
7. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 38